600.0016.03.02.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 փետրվարի 2016 թվականի №16Ա
քաղ. Երևան

«ԷԿՈՆՈՄԻՆԿԱՍԱՑԻԱ» ԴՈՒՍՏՐ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0817 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ԱՐԱՐԱՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հունվարի 22-ի №08-21/05 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի հուլիսի 28-ին «ԷԿՈՆՈՄԻՆԿԱՍԱՑԻԱ» դուստր փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «ԷԿՈՆՈՄԻՆԿԱՍԱՑԻԱ» դուստր փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված №ԳՌՑ-0329 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №413Ա որոշմամբ երկարաձգված և նոր խմբագրությամբ շարադրված ռադիոհաճախականության օգտագործման №0817 թույլտվությունը վերաձևակերպել «ԱՐԱՐԱՏ ԻՆԿԱՍԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերության անվամբ և թույլտվության պայմանների «Գտնվելու վայրը» տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Նար-Դոսի 2.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
3 փետրվարի 2016թ.
ժամը 16 ⁰⁰